Քաղաքացիական կրթության թեստ

Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Ուշադիր ծանոթացեք առաջադրանքների հրահանգներին, ճիշտ ըմբռնեք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը, այնուհետև պատասխանեք հարցերին:

Թեստի առավելագույն միավորն է՝ 60

Թեստի վրա աշխատելու համար տրվում է 5 ժամ

Մաղթում ենք հաջողություն:

Հրահանգ

- **Առաջադրանք՝ ընտրովի պատասխաններով (№1-13, 25.1-25.3)**

Յուրաքանչյուր հարցին տրված է չորս ենթադրական պատասխան: Դրանցից ճիշտ է միայն մեկը: Պատասխանների թերթիկի վրա, ճիշտ պատասխանի համապատասխան վանդակում, դրեք **X** նշանը: Եթե ցանկանում եք ուղղել նշված պատասխանը, ապա ամբողջությամբ ներկեք այն վանդակը, ուր դրել եք **X** նշանը և այնուհետև նշեք պատասխանի նոր տարբերակը: Ուղղած պատասխանը կրկին անգամ հնարավոր չէ ընտրել: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

- **Հաջորդականության սահմանում (№14)**

Առաջադրանքում տրված թվարկացանկը դասավորեք նշված սկզբունքի համաձայն: Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկի վրա տրված վանդակներում: Ի նկատի ունեցեք, որ վանդակում գրվում է միայն ընտրված պատասխանի համապատասխան թվանշանը: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

- **Համապատասխանության որոշում (№15-17)**

Առաջադրանքում երկու սյունակով տրված է տարբեր տեսակի թվարկացանկ: Որոշեք համապատասխանությունը այս երկու սյունակում ներկայացված տեղեկատվության միջև: Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում: Միավորների առավելագույն քանակը նշված է առաջադրանքի երկայնքով:

- **Սխալի ուղղում (№18)**

Առաջադրանքում տրված է տեքստ, որտեղ թույլ են տրված փաստացի սխալներ (տարեթիվ, տերմին, անուն և այլն): Գտեք և ուղղեք դրանք: Գտած սխալը և դրա ուղղած տարբերակը գրառեք պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում (սխալը՝ I սյունակում, իսկ ուղղած տարբերակը՝ II սյունակում): Ի նկատի ունեցեք, յուրաքանչյուր գտած սխալ, իր ուղղված տարբերակի հետ միասին, գնահատվում է 1 միավոր: Միավորների առավելագույն քանակը նշված է առաջադրանքի երկայնքով:

- **Սխալի ուղղում (№19)**

Առաջադրանքում տրված է մեկ թեմայի հետ կապված երկու տեքստ: Երկու տեքստն էլ պարունակում են փաստացի սխալներ: Ձեր խնդիրը տեքստերի վերլուծումն է, սխալների հայտնաբերումը և տեքստերի գնահատումը նախապես տրված սխեմայով սահմանված չափորոշիչներով: Գնահատումը գրառեք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում: Միավորների առավելագույն քանակը նշված է առաջադրանքի երկայնքով:

- **Առաջադրանք՝ բաց վերջավորությամբ (№20, 21, 22, 23, 24, 25.4-25.7)**

Առաջադրանքում տրված է հարց, որին կցված չեն ենթադրական պատասխաններ: Ուշադրությամբ ընթերցեք առաջադրանքի պայմանը և հարցը: Պատասխանը պետք է լինի հարցին համարժեք և կոնկրետ: Պատասխանը գրառեք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում: Միավորների առավելագույն քանակը նշված է յուրաքանչյուր առաջադրանքի երկայնքով:

1. Թվարկածներից ո՞ր սկզբունքը *չի հանդիսանում* ազատականության (լիբերալիզմ) բնորոշ հատկանիշ:

ա. Անձի անհատականության և յուրաքանչյուր մարդու ունիկալության ընդունումը

բ. Անհատի բանականության ընդունումը, ինչը ենթադրում է յուրաքանչյուր մարդու կողմից սեփական կյանքը հիանալի կերպով տնօրինելը

գ. Հասարակական համաձայնության սկզբունքի ընդունումը, ինչի հիման վրա էլ պետք է իրագործվի քաղաքական կառավարումը

դ. Մարդու համամարդկային ազատության ընդունումը, ինչին կարելի է հասնել ունիվերսալ սոցիալական հավասարությամբ

2. Ո՞րը *չի հանդիսանում* փողի հիմնական գործառույթը:

ա. Շահույթը

բ. Շրջանառությունը

գ. Կուտակումը

դ. Արժեքի չափումը

3. Ո՞ր ընդհանուր հատկանիշն է բնորոշ աբրահամական կրոններին:

ա. Մոնոթեիզմը

բ. Դիոֆիզիտությունը

գ. Մոնոֆիզիտությունը

դ. Պոլիթեիզմը

4. Ո՞ր հիմնական սկզբունքի վրա է հիմնվում օգտապաշտական (ուտիլիտարիստական) ուսմունքը:

ա. Համերաշխության

բ. Օգտավետության

գ. Գենդերային հավասարության

դ. Տնտեսական հավասարության

5. Վրաստանի պետական աուդիտի ծառայության վերաբերյալ ո՞ր դատողությունն է արդարացի:

ա. Հանդիսանում է նյութական ռեսուրսների կիրառման վերահսկիչ մարմին, որի իրավազորությունը սահմանում է Վրաստանի նախագահը

բ. Հանդիսանում է տնտեսական զարգացման կառավարման ծառայություն, որը հաշվետու է Վրաստանի նախագահի առջև

գ. Հանդիսանում է հանրային միջոցների ու այլ նյութական արժեքների օգտագործման մոնիտորինգի ծառայություն, որը հաշվետու է Վրաստանի խորհրդարանի առջև

դ. Տարեկան երկու անգամ պարտավոր է խորհրդարանին ներկայացնել կառավարության հաշվետվության հետ կապված զեկույց, ինչը սահմանափակում է նրա գործունեության անկախությունը

6. Ժողովրդավարական ընտրությունների սկզբունքները նախատեսելով, ինչպիսի՞ն է ընտրողների քվեարկության ընթացակարգը այն դեպքում, եթե ֆիզիկական վիճակի պատճառով ընտրողը չի կարող ինքնուրույն լրացնել քվեաթերթիկը:

ա. Իրեն օգնություն ցուցաբերելու նպատակով, ընտրողն իրավունք ունի, քվեախցիկ հրավիրել ցանկացած անձի, բացառությամբ՝ ընտրական հանձնաժողովի անդամի, թեկնածուի, դիտորդի, ընտրական սուբյեկտի ներկայացուցչի:

բ. Իրեն օգնություն ցուցաբերելու նպատակով, ընտրողն իրավունք ունի քվեախցիկ հրավիրել միայն ընտրատեղամասային հանձնաժողովի անդամներին:

գ. Ընտրողն ընրություններին մասնակցելու իրավունք չունի, քանի որ ժողովրդավարական ընտրությունների սկզբունքներից մեկը քվեարկության գործընթացի գաղտնիությունն է:

դ. Իրեն օգնություն ցուցաբերելու նպատակով, ընտրողն իրավունք ունի քվեախցիկ հրավիրել, ինչպես որևէ այլ ընտրողի, այնպես էլ ընտրատեղամասային հանձնաժողովի անդամներին:

7. Ո՞ր սխեմատիկ պատկերն է ճիշտ արտացոլում կոնֆլիկտային իրավիճակում ներգրավված կողմերի պահանջների, շահերի ու դիրքորոշումների փոխկապակցվածությունը:

ա.



բ.



գ.



դ.



8. «Խտրականության բոլոր ձևերը արմատախիլ անելու մասին» Վրաստանի օրենքը պաշտպանում է՝

ա. Միայն Վրաստանի քաղաքացիների իրավունքները

բ. Վրաստանի տարածքում գտնվող բոլոր անձանց իրավունքները

գ. Բացառիկորեն սեռական և կրոնական փոքրամասնությունների իրավունքները

դ. Բոլոր մարդկանց իրավունքները, բացառությամբ մեծամասնության մեջ գտնվող քաղաքացիների իրավունքների

9. Ի՞նչ է նկատառում մշակութային ռելատիվիզմը:

ա. Մշակույթների միջև տարբերությունները վերացնելը

բ. Մյուս մշակույթների գնահատումը սեփական մշակույթի նորմերով և արժեքներով

գ. Տարբերվող մշակութային ֆենոմենները մեկ համապարփակ մշակութային արժեքների համատեքստում ըմբռնելը

դ. Մշակութային ֆենոմենների ընկալումը, նույն այն մշակույթի համատեքստում, ուր դրանք ի հայտ են գալիս

10. Անչափահասներին աշխատանքի տեղավորելու վերաբերյալ դատողություններից ո՞րը *չի համապատասխանում* Վրաստանի աշխատանքային օրենսգրքին:

ա. Անչափահասներին արգելվում է աշխատանքի ընդունել խաղային բիզնեսի և զվարճանքի գիշերային հաստատություններում

բ. 16 տարին չբոլորած անչափահասներին աշխատանքի ընդունելու համար անհրաժեշտ է նրա օրինական ներկայացուցչի կամ հոգաբարձուի համաձայնությունը

գ. 14 տարին չբոլորած անչափահասներին, հոգաբարձուի համաձայնության դեպքում, աշխատանքի ընդունել հնարավոր է միայն սպորտի, արվեստի հետ կապված, մշակութային բնագավառում, ինչպես նաև գովազդային ծառայությունում

դ. Հոգաբարձուի համաձայնության դեպքում անչափահասներին հնարավոր է աշխատանքի ընդունել դեղանյութերի պատրաստման, տեղափոխման և իրացման հետ կապված աշխատանքներ կատարելու համար

11. Ո՞ր դատողություն է ճշգրիտ արտացոլում սոցիալ-դեմոկրատական գաղափարախոսության բնորոշ առանձնահատկությունը:

ա. Պլանային տնտեսության պահպանումը և պետության կողմից քաղաքացիների սոցիալական վիճակի համար ողջ պատասխանատվությունը իր վրա վերցնելը

բ. Շուկայական տնտեսության պահպանումը և քաղաքացիների սոցիալական վիճակը բարելավելու նպատակով կենտրոնացված տնտեսական համակարգի օգտագործումը

գ. Տնտեսական տարածքում պետության առավելագույնս չմիջամտելը և քաղաքացիների կողմից սոցիալական վիճակի համար ողջ պատասխանատվությունը իրենց վրա վերցնելը

դ. Պետության կողմից շուկայական տնտեսության մեջ պլանավորման տարրեր մտցնելը և ազատ առևտրի պայմաններում բոլոր քաղաքացիների սոցիալական ապահովությունը

12. Առաջադրանքում տրված են հեռուստառադիոհեռարձակման առաջնահերթությունների հետազոտության արդյունքները: Դիագրամը արտացոլում է վրացական հեռուստատարածքում առկա ռեյտինգային և դեֆիցիտային հաղորդումները:

Հաղորդումների վարկանիշը (ռեյտինգ)	Դեֆիցիտային հաղորդումներ





Ո՞ր դատողությունն է համապատասխանում դիագրամի տվյալներին:

ա. Հարցվածների 43%-ը հումորային հաղորդումները նշում է ռեյտինգային հաղորդումների շարքում, թեպետ հարցվածների մեծամասնությունը նման հաղորդումները դեֆիցիտային է համարում

բ. Սպորտային հաղորդումները ցածր ռեյտինգ ունեցող հաղորդումների շարքում են, ինչը բարձր ցուցանիշ է առաջացնում դեֆիցիտային հաղորդումների թվարկացանկում

գ. Ճանաչողական հաղորդումները մյուս հաղորդումների հետ համեմատ առանձնանում են բարձր ռեյտինգով և ցածր դեֆիցիտայնությամբ

դ. Ժամանցային թոք-շոուները դիտում է հարցվածների կեսից ավելին, միաժամանակ հարցվածների 10%-ը նման հաղորդումները դեֆիցիտային է համարում

13. Առաջադրանքում տրված են «Միջազգային թափանցիկություն-Վրաստան»-ի կողմից 2015 թվականին անցկացված հասարակական կարծիքի հետազոտման որոշ արդյունքներ՝

- Հարցվածների 5%-ը արդարացնում է պաշտոնատար անձանց կողմից առանց բաց մրցույթի իրենց բարեկամներին, ընկերներին կամ կուսակցության անդամներին հանրային սեկտորում աշխատանքի տեղավորելը, իսկ մասնավոր սեկտորում նման կերպով աշխատանքի տեղավորելը արդար է համարում հարցվածների 19%-ը:
- Հարցվածներից 68%-ը պաշտոնատար անձանց կողմից իրենց բարեկամներին, ընկերներին կամ կուսակցության անդամներին հանրային սեկտորում աշխատանքի տեղավորելն անարդար է համարում, իսկ մասնավոր սեկտորում՝ 34%-ը:
- Պաշտոնատար անձանց կողմից նման որոշումը հանրային սեկտորի դեպքում մասամբ արդարացված է համարում քաղաքացիների 17%-ը, իսկ մասնավոր սեկտորի դեպքում՝ 25%-ը:

Տվյալների հիման վրա արված ո՞ր եզրակացությունն է արդարացի:

ա. Հարցվածների բացարձակ մեծամասնության համար մասնավոր սեկտորում նեպոտիզմն անարդարացի է

բ. Հարցվածների մեծամասնության համար հանրային սեկտորում նեպոտիզմն արդարացված է

գ. Հարցվածների մեծ մասը մասնավոր սեկտորում նեպոտիզմն ավելի թույլատրելի է համարում, քան հանրային սեկտորում

դ. Հարցվածների գերակշիռ մասը նեպոտիզմը հանրային սեկտորում մասամբ արդարացի է համարում, քան մասնավոր սեկտորում

14. (1) Սխեմայի վրա ոչ հաջորդական կերպով տրված են մարդու իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիաները: Դասակարգեք կոնվենցիաները ժամանակագրական առումով ըստ դրանց ընդունման տարեթվի:



	2*		

* Աղյուսակում նշված է ճիշտ պատասխանը

15. (1) Համապատասխանեցրեք II սյունակում նշված ժողովրդավարության մոդելները I սյունակում տրված դրանց հիմնական բնութագրիչների հետ:

I. Հիմնական բնութագրիչներ	II. Ժողովրդավարության մոդելներ
ա.Քաղաքացիների իրավունքների և ազատությունների իրականացման ապահովումն ու սեփական սոցիալ-մշակութային վիճակի համար անհատի պատասխանատվության ընդունումը	1. Ժողովրդական դեմոկրատիա 2. Դասական (Աթենական) ժողովրդավարություն 3. Աջակցող ժողովրդավարություն 4. Պաշտպանող ժողովրդավարություն
բ. Անձի անմիջական մասնակցության աստիճանի բարձրացումը իր համայնքային կյանքում, ինչով և յուրաքանչյուր անհատին քաղաքական հավասարություն ձեռք բերելու, քաղաքացիական ինքնագիտակցությունը բարձրացնելու հնարավորություն է տրվում	
գ. Պրոլետարիատի դիկտատուրան, որի հիմնական նպատակը ընդհանուր սեփականության ճանապարհով սոցիալ-տնտեսական հավասարությանը հասնելն է	
դ. Անմիջական ժողովրդական ինքնակառավարումը, որի ժամանակ կարևոր որոշումները կայացնում են ժողովրդական ժողովին	

16. **(2) Համապատասխանեցրեք II սյունակում տրված մրցակցության ձևերը I սյունակում տրված դրանց հիմնական բնութագրիչների հետ.**

I. Հիմնական բնութագրիչներ	**II. Մրցակցության ձևեր**
ա. Շուկայում բազմաթիվ սպառողների պահանջները մի քանի սուբյեկտ է բավարարում	1. Խտրական մենաշնորհ
բ. Շուկայում գոյություն ունի միայն մեկ արտադրող և բազմաթիվ սպառողներ	2. Օլիգոպոլիա
գ. Ձեռնարկությունները սպառողին առաջարկում են նման, սակայն ոչ նույնական ապրանք	3. Կատարյալ մրցակցություն
դ. Արտադրողները մեծ քանակությամբ համանման ապրանքն են արտադրում	4. Մենաշնորհային մրցակցություն
ե. Տարբեր գնորդների համար ընկերությունը տարբեր գներ է սահմանում	5. Մենաշնորհ

17. (1) Քարտեզն արտացոլում է աշխարհում գենդերային հավասարության աստիճանը: Աղյուսակի I սյունակում տրված երկրները համապատասխանեցրեք II սյունակում տրված գենդերային հավասարության աստիճանին.



I. Երկիր	II. Գենդերային հավասարության աստիճանը
ա. Ռուսաստան	1. Շատ բարձր
ծ. Հնդկաստան	2. Բարձր
գ. Վրաստան	3. Միջին
զ.Նորվեգիա	4. Ցածր
ը. Չինաստան	5. Շատ ցածր

18. **(6) Ուշադիր կարդացեք տեքստը, գտեք և ուղղեք սխալները.**

Խտրականության հիմնախնդիրը

Այն սկզբունքը, որ բոլոր մարդիկ ի ծնե հավասար են և օգտվում են հավասար իրավունքներից, մարդու իրավունքների գաղափարի անկյունաքարն է: Հավասարության գաղափարը բխում է մարդկային արժանապատվությունից և արտացոլված է թե՛ միջազգային և թե՛ ազգային փաստաթղթերում:

Մարդու նկատմամբ տարբեր նշաններով խտրականության հարցին վերաբերում են բազմաթիվ միջազգային ակտեր, այդ թվում՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (1951թ.), Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական հուշագիրը (1950թ.), Սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիրը (1966թ.):

Վրաստանի 1995 թվականի քաղաքացիական օրենսգրքի 2-րդ գլխի համաձայն. «Բոլոր մարդիկ ծնված օրվանից սահմանափակ են և օրենքի առջև հավասար, անկախ ռասայից, մաշկի գույնից, լեզվից, սեռից, կրոնից, քաղաքական և այլ հայացքներից, ազգային, էթնիկ և սոցիալական պատկանելությունից, ծագումից, գույքային ու դասային վիճակից, բնակության վայրից»:

Անցում տեքստի երկրորդ էջին

Մարդու պարտավորությունների որևէ սահմանափակումը, սոցիալական, ռասայական, սեռական պատկանելության, քաղաքական, կրոնական կամ տարբեր հայացքների համաձայն, կոչվում է խտրականություն: Որպես օրինակ կարող ենք բերել «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան», որի համաձայն, կնոջ նկատմամբ խտրականություն նշանակում է՝ «սոցիալական նշանով ցանկացած տարբերություն, բաժանում կամ սահմանափակում, որին կարող է հետևել քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքացիական կամ ցանկացած այլ բնագավառում մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները ընդունելու, օգտվելու կամ կիրառելու թուլացումը կամ բացարձակ ժխտումը»:

Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային և ազգային մեխանիզմները հակված են պաշտպանել մարդկանց՝ պետության կողմից խտրականական ազդեցությունից:

Վերադարձ տեքստի առաջին էջին

19. (6) Առաջադրանքում տրված է աշակերտների կողմից գրված երկու տեքստ «Պետության կառուցվածքը» թեմայով: Հնարավոր է տեքստերը պարունակեն սխալներ: Ծանոթացեք տեքստերին, վերլուծեք բովանդակությունը և գնահատեք դրանք առաջարկած չափորոշիչներով:

I տեքստ.

Պետություններն իրարից տարբերվում են տարբեր հատկանիշներով: Թեպետ յուրաքանչյուր պետության համար անհրաժեշտ է ունենալ սեփական տարածք: Դա պետության էական հատկանիշն է: Այս հատկությամբ իրարից տարբերում են պարզ և բարդ պետությունները: Դաշնային պետությունները բաժանվում են ավել կամ պակաս անկախություն ունեցող պետական միավորների:

Երկրները իրարից տարբերվում են նաև կառավարման ձևերով: Գոյություն ունի կառավարման երկու հիմնական ձև, դրանք են՝ միապետություն, երբ բարձրագույն պետական իշխանությունը պատկանում է մեկ անձին՝ միապետին և հանրապետություն, երբ պետության կառավարիչներն են բնակչության կողմից ընտրված մարմիններն ու պաշտոնատար անձինք: Միապետությունը հիմնականում երկու տեսակի է՝ անսահմանափակ, այսինքն բացարձակ և սահմանափակ, այսինքն սահմանադրական:

Ի տարբերություն միապետության, հանրապետական կառավարման ձևում պետական իշխանությունը կրում է կոլեգիալ բնույթ և հիմնվում է իշխանությունների բաժանման սկզբունքի վրա, երբ դատական, գործադիր եւ օրենսդիր իշխանությունները հիմնվում են փոխհավասարակշռելու սկզբունքի վրա:

Անցում II տեքստին *Անցում գնահատման սխեմային*

II տեքստ.

Աշխարհում գոյություն ունեցող պետություններն ունեն, ինչպես ընդհանուր, այնպես էլ բազմաթիվ տարբերակիչ հատկանիշներ: Այդ թվում են պետության կառավարման և տարածքային կառուցվածքի հարցերը:

Բոլոր պետություններն ունեն սահմաններով սահմանազատված տարածք: Դրանցից մի քանիսը կառուցված են միասնականացված ձևով՝ այսինքն ունիտար են և նրանց տարածքում գոյություն ունեն միայն ամբողջ երկրի համար ընդհանուր իշխանության բարձրագույն մարմիններ:

Երկների կառավարման ձևերում հատկանշական է միապետությունը և հանրապետությունը: Միապետությունն էլ իր հերթին բաժանվում է բացարձակ և սահմանադրական միապետության: Սահմանադրական միապետությունը այն տեսակի միապետություն է, երբ թագավորը, կայսրը կամ շահը իրեն է հարմարեցնում սահմանադրությունը և հանդիսանում է միանձնյա կառավարիչ:

Ի տարբերություն միապետության, հանրապետական կառավարման ձևում պետական իշխանությունը կրում է կոլեգիալ բնույթ և հիմնվում է իշխանությունների բաժանման սկզբունքի վրա, երբ դատական, գործադիր եւ օրենսդիր իշխանությունները հիմնվում են փոխհավասարակշռելու սկզբունքի վրա: Փոխադարձ վերահսկողության մեխանիզմները սահմանում են, թե ինչպիսին է կառավարման համակարգը՝ նախագահական թե խորհրդարանական:

վերադարձ I տեքստին *Անցում գնահատման սխեմային*

Ուշադիր ծանոթացեք գնահատման սխեմային և երկու տեքստն էլ գնահատեք տրված չափորոշիչների համաձայն: Գրեք համապատասխան միավորը գնահատման սխեմայի յուրաքանչյուր չափորոշիչի համար առանձին-առանձին.

	I. Չափորոշիչներ	II. Առավելագույն միավոր	III. Միավորներ շնորհելու սկզբունքը
A.	**Վարչատարածքային կառուցվածքը**	**2**	Յուրաքանչյուր ճիշտ անվանած և պարզաբանած վարչատարածքային կառուցվածքի ձևը - 1 միավոր
B.	**Կառավարման հիմնական ձևերը**	**2**	Յուրաքանչյուր ճիշտ անվանած և պարզաբանած կառավարման հիմնական ձևը - 1 միավոր
C.	**Կառավարման համակարգը**	**5**	Յուրաքանչյուր ճիշտ անվանած կառավարման համակարգը - 1 միավոր

Ձեր կողմից շնորհված միավորները գրառեք պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում.

		A	B	C
19.1	I տեքստի գնահատում			
19.2	II տեքստի գնահատում			

Անցում I տեքստին *Անցում II տեքստին*

20. (4) Տրված է քաղաքական գաղափարախոսությունների , դրանց բնութագրիչների և կոնկրետ պատմական օրինակների թերի սխեմատիկ պատկերը: Լրացրեք սխեմայի դատարկ վանդակները.

Քաղաքական գաղափարախոսություններ	Բնութագրիչ հատկանիշներ	Պատմական օրինակներ
20.1.	Արմատական փոփոխությունների նկատմամբ հակասությունն ու փորձված քաղաքական գործելակերպերով ղեկավարումը	Մարգարետ Թեթչերի քաղաքական գործունեությունը 1980-ական թվականներին
Ֆեդերալիզմ	Պետության բաղկացուցիչ սուբյեկտներին (հողեր,նահանգներ, գավառներ և այլն) քաղաքական թե տնտեսական ինքնակառավարման շնորհումը	20.2.
Նացիոնալիզմ	20.3.	Թուրքիայի ազգային շարժման կազմավորումը 1919 թվականին և Թուրքիայի Հանրապետության հռչակումը 1923 թվականին
20.4.	Հակամարդկային, ռասիստական և շովինիստական քաղաքական գաղափարախոսության վրա հիմնված դիկտատորական և տոտալիտար վարչակարգը	Իտալիայի թագավորության կողմից Ալբանիայի թագավորության օկուպացումը 1939 թվականին

21. (4) Քարտեզի վրա կապույտ և դեղին գույներով նշված են միջազգային կազմակերություններից մեկի անդամ երկրները: Քարտեզի վերլուծության հիման վրա պատասխանեք հարցերին.



21.1 Ո՞ր միջազգային կազմակերպությունն է ներկայացված քարտեզի վրա:

21.2 Պարզաբանեք, թե ի՞նչ պետք է նշանակի քարտեզի վրա դեղին գույնը:

21.3 Անվանեք տվյալ կազմակերպության երկու կառուցվածք, որի գործունեության մեջ մասնակցում է Վրաստանը:

22. (5) Առաջադրանքում տրված է դպրոցական նախագծի նպատակի, խնդիրների և իրականացման ուղիների ոչ լիարժեք տարբերակը: Դպրոցական նախագծի տրված հատվածին ավարտված տեսք տալու համար առաջադրանքները կատարեք հետևյալ հաջորդականությամբ.

I. Որոշեք և գրառեք I խնդիրը, ելնելով աղյուսակում տրված իրականացման ուղիների թվարկացանկից (Առաջադրանք 22.2)

II. Գրեք իրականացման երեք տարբեր ուղի, որոնք Ձեր կարծիքով, նպաստում են աղյուսակում տրված II խնդրի կատարմանը (Առաջադրանք 22.3)

III. Որոշեք և գրառեք նախագծի նպատակը, որին հասնել հնարավոր է նախագծի երկու խնդրի և դրանց իրականացման ուղիներից ելնելով: (Առաջադրանք 22.1)

22.1	Նախագծի նպատակը. *(Գրեք նպատակը, որին հասնել հնարավոր է տրված խնդիրներից և իրականացման ուղիներից ելնելով)*
22.2	<u>Նախագծի I խնդիրը.</u> *(Սահմանեք և գրեք կոնկրետ խնդիր I խնդրի իրականացման ուղիներից ելնելով)* <u>Նախագծի II խնդիրը.</u> Առողջ ապրելակերպի կանոնի հանրայնացումը, որպես վնասակար կախվածությունների ձևավորման արդյունավետ կանխարգելում
22.3	<u>I խնդրի իրականացման ուղիներ.</u> 1. Փոքր խմբերում աշակերտների կողմից հոգեկան և վարքային կախվածությունների մասին գրականության մշակում և շնորհանդեսների կազմակերպում 2. Աշակերտների կողմից « ի՞նչ գիտեմ վնասակար նյութերի մասին» հարցաշարի մշակում , բարձր դասարանների աշակերտների ու նրանց ծնողների հարցում և արդյունքների վերլուծություն : *3.* Հրավիրված հոգեբան/նարկոլոգի կողմից անչափահասների շրջանում վնասակար կախվածություններից առաջացած փսիխոսոմատիկ և վարքի խախտումների մասին դասախոսություն-սեմինարների անցկացում <u>II Խնդրի իրականացման ուղիներ.</u> *(Գրեք տրված խնդրի իրականացման երեք տարբեր ուղիներ)* 1. 2. 3.

23. (4) Ծանոթացեք նկարին և պատասխանեք հարցերին.



23.1 Ձեր կարծիքով, ո՞րն է նկարի գլխավոր ասելիքը:

23.2 Փաստարկված դատողություններ արեք, որքանով իրական է նշյալ հիմնախնդիրը արդիականության համար:

23.3 Փաստարկված դատողություններ արեք, թե ի՞նչը կարող է լինել այդ հիմնախնդիրը լուծելու միջոցը: Բերեք օրինակ:

24. **(5) Ծանոթացեք տեքստին և կատարեք առաջադրանքը ստորև տրված ցուցումներին համապատասխան.**

«Կար ժամանակ, երբ դավանանքի, հավատքի բազմազանության համար ևս հանդիմանում էին: Կար ժամանակ, երբ մտածում էին, որ այնտեղ, որտեղ նույն պետության ազգությունները Աստծուն տարբեր ծեսերով են մեծարում, պետության միասնությունը կտատանվի և կխախտվի: Ռեֆորմացիան հաստատեց, որ այդ կարծիքը միայն տգիտության պտուղ է, հաստատեց, որ նույն պետության մեջ հիանալի կերպով կարող են տեղ գտնել տարբեր հավատքները և միասնության կապի հիմքից մի քար անգամ չի պակասի: Կգա ժամանակ, և կարծում ենք երկար սպասելու հարկ չի լինի, երբ լեզվի մասին նույնպես կասեն այն, ինչ այժմ գիտուններն ու անգետները միաձայն ասում են կրոնական դավանանքի մասին»:

Իլյա Ճավճավաձե, Ներքին տեսություն, 1881 թվական

24.1 Ելնելով տեքստից որոշեք և անվանեք բանավեճի թեման: Դատողություններ արեք տվյալ տեքստի հետ Ձեր ընտրած բանավեճի թեմայի համապատասխանության և ակտուալության մասին:

24.2 A. Անվանեք երկու փաստարկ բանավեճի ժամանակ առաջացած դիրքորոշումը պաշտպանելու համար:

B. Անվանեք երկու փաստարկ բանավեճի ժամանակ առաջացած դիրքորոշումը հերքելու համար:

(Յուրաքանչյուր փաստարկ պետք է կրի էականորեն անկախ միտք)

25. **(8) Վերլուծեք տրված աղբյուրները և պատասխանեք հարցերին.**

Աղբյուր N1

«Ճոխությունն առավել սահմանափակելու և շահասիրությանը վերջ տալու նպատակով, Լիկուրգոսը սահմանել է երրորդ՝ ամենահրաշալի օրենքը: Դա համատեղ սնվելու օրենքն էր: Ճաշելու ժամանակ քաղաքացիները պետք է միատեղ հավաքվեին և ուտեին օրենքով նախատեսված ընդհանուր ճաշատեսակ: Նրանք իրավունք չեն ունեցել ճաշել տանը՝ բազմած սեփական շքեղ գահույքին, լի սեղանների շուրջ և ուտել վարպետացած խոհարարների հմուտ ձեռքերով պատրաստված նրբախորտիկներ»

Պլուտարքոս (56-127), «Լիկուրգոս»

Անցում աղբյուրներին. 2, 3, *Անցում առաջադրանքներին .* 25.1, 25.2, 25.3, 25.4-25.7

Աղբյուր N2

«Քաղաքացիական հասարակության հասկացությունը տարբերությունների կարիք ունի. տարբերություն հանրայինի ու մասնավորի (սեփականի), պետության ու հասարակության, գաղափարականի ու իրականի, ներքին ու արտաքին աշխարհների միջև: Քաղաքացիական հասարակությունը հիմնվում է համոզմունքի այն փաստի վրա, որ մարդուն վստահելիս, որպեսզի անձամբ ձգտի սեփական շահերին, որոշակի համաչափություն է ձևավորվում անձնական և հանրային աշխարհների միջև: Հավատքին առ այն, որ մեր ազատ գործողությունները ծառայում են ընդհանուր բարեկեցությանը:

Դու չես կարող բարեկարգել հասարակությունը, ամեն ինչ դրսից վզին փաթաթելու միջոցով, ճնշելով այն ամենն, ինչ ձևավորվում է հանպատրաստից: Հենց դա տեղի ունեցավ հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ: Պետությունը ամեն ինչին միջամտելու որոշում կայացրեց: Իսկ դա քաղաքացիական հասարակության մահ է նշանակում: Նա քաղաքացիներին մահից հետո կյանքի է դատապարտում, նվազագույն կյանքի, որը երաշխավորված է պետության կողմից, բայց չի զարգանում»:

Մերաբ Մամարդաշվիլի (1930-1990)

Անցում աղբյուրներին. 1, 3, *Անցում առաջադրանքներին .* 25.1, 25.2, 25.3, 25.4-25.7

Աղբյուր N3

«Այս միջին խավի համար նախատեսված բնակարաններում (նկատառվում են այսպես կոչված կորպուսները) մարդկանց ճակատագիրը երբեմն նախորոք է սահմանվում, այդտեղ ապաստանելու պահից: Հավանաբար, կհամաձայնվես, որ ազատությունը, առաջին հերթին արտահայտվում է նրանում, թե որտեղ և երբ են մարդիկ վարում այս կամ այն գործունեությունը, քանի որ այն ինչ նրանք անում են, սովորաբար ախր նույն բանն է»:

Ռոբերտ Մուզիլ, «Կեռնեխը» (1936)

Անցում աղբյուրներին. *1*, *2*,

Անցում առաջադրանքներին . *25.1*, *25.2*, *25.3*, *25.4-25.7*

25.1. Առաջին աղբյուրում քննարկված վերաբերմունքը ո՞ր գաղափարախոսությանն է բնորոշ:

ա. Լիբերալիզմ

բ. Կոնսերվատիզմ

գ. Սոցիալիզմ

դ. Նեոլիբերալիզմ

Անցում աղբյուրներին. *1*, *2*, *3*,

Անցում առաջադրանքներին . *25.2*, *25.3*, *25.4-25.7*

25.2. Մամարդաշվիլիի կարծիքով.

ա. Անձնական և հանրային տարածքների սահմանազատումը մարդուն օտարում է հասարակությունից

բ. Քաղաքացիական հասարակությունը գործունակ կարող է լինել միայն այնտեղ, որտեղ մարդը գիտակցում է այլ մարդկանց հետ համակեցության անհրաժեշտությունը

գ. Առանց մասնավոր և պետական ոլորտների սահմանազատման մարդկանց հնարավոր չէ ազատ համարել

դ. Բացարձակ ազատության պայմաններում, որտեղ պետությունը չի վերահսկում մարդու անձնական կյանքը, կարող է առաջանալ խառնաշփոթ

Անցում աղբյուրներին. 1, 2, 3, *Անցում առաջադրանքներին .* 25.1, 25.3, 25.4-25.7

25.3. Ռոբերտ Մուզիլի կարծիքով.

ա. Մարդու կենսամիջավայրը մարդու ազատության միակ արտահայտությունն է

բ. Մարդու ազատությունը բացահայտվում է սեփական կյանքը սեփական տեսակետով դասավորելու մեջ

գ. Մարդիկ մշտապես միմյանցից տարբեր կերպ են վարվում, ինչը սկզբունքայնորեն սխալ է

դ. Մարդու ազատությունը հնարավոր է միայն այլ մարդկանց հետ համակեցության դեպքում

Անցում աղբյուրներին. 1, 2, 3, *Անցում առաջադրանքներին .* 25.1, 25.2, 25.4-25.7

25.4. Տեքստից ելնելով բացատրեք, թե ի՞նչն է անվանում Մամարդաշվիլին «նվազագույն կյանք»:

25.5. Ի՞նչ է նկատառում Մամարդաշվիլին, երբ հոկտեմբերյան հեղափոխությունը նկարագրելիս ասում է.՝ «պետությունը ամեն ինչին միջամտելու որոշում կայացրեց »:

25.6. Բացատրեք ի՞նչ է նշանակում մասնավոր և հանրային տարածքի սահմանազատում: Ինչպես ե՞ք կարծում ինչո՞ւ է դա անհրաժեշտ պայման հանդիսանում քաղաքացիական հասարակության գոյության համար:

25.7. Փաստարկված դատողություններ արեք, թե որքանո՞վ է Վրաստանում պաշտպանված մարդու անձնական տարածքը:

Անցում աղբյուրներին. 1, 2, 3, *Անցում առաջադրանքներին .* 25.1, 25.2, 25.3,